Հավելված N 3
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 1-ի N 896 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ԶԵՆՔԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ԶԵՆՔԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՑՈՒՑԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՎԱՃԱՌՔԻ, ՓՈԽԱՆՑԵԼՈՒ, ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ՑՈՒՑԱԴՐԵԼՈՒ, ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ

1. Սույնով սահմանվում են զենքի հավաքածու կազմելու և զենքի հավաքածու ցուցադրելու կանոնները, վաճառքի, փոխանցելու, ձեռք բերելու, ցուցադրելու, պահելու և փոխադրելու կարգը:

2. Ֆիզիկական և իրավաբանական անձինք, զենքի հավաքածու կարող են կազմել Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրված թույլտվության հիման վրա:

3. Զենքի հավաքածուն ընտրված զենքերի ամբողջություն է, որը կարող է ունենալ ճանաչողական, պատմական, գիտական, գեղարվեստական, մշակութային և տեղեկատվական նշանակություն.

4. Իրավաբանական և ֆիզիկական անձինք զենքի հավաքածու կարող են կազմել Հայաստանի Հանրապետության ոստիկանության տված՝ զենքի հավաքածու կազմելու թույլտվության հիման վրա: Իրավաբանական և ֆիզիկական անձանց զենքի հավաքածուում կարող են ներառվել ինքնապաշտպանական, սիրողական, որսորդության, սպորտային, ճանաչողական, պատմական, գիտական, գեղարվեստական, մշակութային և տեղեկատվական նշանակության զենքի տեսակները:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից հավաքածու կազմելու թույլտվություն չի պահանջվում քաղաքացիական զենքի այն տեսակների համար, որոնք ձեռք են բերվում առանց թույլտվության:

6. Իրավաբանական անձինք, բացի պետական ռազմականացված կազմակերպություններից, սույն կետում նշված հավաքածու կազմելու նպատակով զենք և

դրա փամփուշտները ձեռք են բերում Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրված թույլտվության հիման վրա՝ համաձայն իրավաբանական անձի ղեկավարի ներկայացրած դիմումի:

7. Պետական ռազմականացված կազմակերպությունները զենքի հավաքածու կազմում են առանց թույլտվության: Պետական ռազմականացված կազմակերպությունները զենքի հավաքածուում կարող են ներառել՝

1) քաղաքացիական զենք.

2) ծառայողական զենք.

3) մարտական զենք.

4) քրեական վարույթներով իրեղեն ապացույց ճանաչված (այդ թվում՝ ինքնաշեն, ապօրինի ձևափոխված կամ Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված) զենք՝ վերջնական դատական ակտի առկայության դեպքում.

5) արտադրական, ուսումնական զենք, փորձարկումների համար նախատեսված կամ նշված նպատակներով պատրաստված զենքի եզակի նմուշներ.

6) համապատասխանության գնահատում չանցած զենք.

7) սույն կետի 1-6-րդ ենթակետերով նախատեսված զենքերի փամփուշտներ:

8. Զենքի հավաքածու չեն համարվում և Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հաշվառման ենթակա չեն՝

1) զենքի և ռազմամթերքի նմանակները (մակետները), որոնցից կենդանի կամ այլ նշանակետ խոցելն անհնար է.

2) կառուցվածքով զենքին նմանվող իրերը:

9. Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության փորձաքրեագիտական ստորաբաժանումները, քրեագիտական հավաքածուների օգտագործման կարգը սահմանում են սույն կետում նշված պետական մարմինները՝ առանց թույլտվության:

10. Պետական, համայնքին, իրավաբանական ու ֆիզիկական անձանց պատկանող թանգարանները զենքի և դրա փամփուշտների փոխանցելը, ձեռք բերելը,

հավաքածուներ կազմելը (այսուհետ՝ հավաքչարարություն) կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության թույլտվությամբ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնությամբ:

11. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են քաղաքացիական զենքի ու դրա փամփուշտների հավաքչարարություն իրականացնել, եթե այդ զենքի ձեռքբերումը չի հակասում «Զենքի շրջանառության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին:

12. Զենքով պարգևատրված անձինք կարող են այդ զենքն ընդգրկել իրենց հավաքածուի մեջ՝ հավաքածու կազմելու թույլտվության առկայության դեպքում:

13. Իրավաբանական ու ֆիզիկական անձանց արգելվում է՝

1) իրականացնել զենքի և դրա փամփուշտների հավաքչարարություն՝ առանց համապատասխան թույլտվություն ստանալու.

2) հավաքել զենքի և դրա փամփուշտների տեսակներ ու մոդելներ, որոնք նախատեսված չեն հավաքածու կազմելու թույլտվությամբ:

14. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրավունք ունեն բնակության վայրում պահելու զենքի և դրա փամփուշտների հավաքածուները դրանց պահպանման, ամբողջականության, անվտանգության պայմաններն ապահովող պայմաններում՝ մետաղյա պահարաններում, գերկայուն (գերամուր) նյութից պատրաստված կամ երկաթով պատված փայտյա արկղերում կամ զենք պահելու տեխնիկական պահանջների համապատասխան սարքավորված սենյակներում:

15. Զենքի ու փամփուշտների հավաքածու կազմելու թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձի ղեկավարը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանություն պարտավոր է ներկայացնել՝

1) դիմում.

2) իրավաբանական անձի կանոնադրության և պետական գրանցման փաստաթղթերի պատճեններ.

3) զենք ու փամփուշտներ պահելու համար նախատեսված շինությունների, զետեղարանների, պահեստների՝ օրինական տիրապետումը հավաստող փաստաթղթեր.

4) հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ուսումնասիրության ակտ.

5) պահպանություն իրականացնող կազմակերպության հետ պայմանագրի պատճենը՝ շինությունների պահպանության վերաբերյալ.

6) իրավաբանական անձի ղեկավարի հրամանների պատճենները՝

ա. իրավաբանական անձի ղեկավարի զետեղարանում զենքն ու փամփուշտները պահելու և հանձնելու պատասխանատու անձ նշանակելու մասին,

բ. զենքի ու փամփուշտների հետ առնչվող աշխատանքներին թույլատրված անձանց ցուցակ.

7) զենքի ու փամփուշտների հավաքածու կազմելու թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձի ղեկավարը պատմամշակութային հավաքածուներ ստեղծելու դեպքում պարտավոր է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանություն ներկայացնել նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնությունը:

16. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հավաքածու կազմելու թույլտվություն ստանալու համար պարտավոր են ներկայացնել դիմում (Ձև N 15),

17. Զենքի հավաքածու կազմող իրավաբանական անձանց ու քաղաքացիներին զենք պահելու թույլտվության հետ միասին հանձնվում է թույլտվությունը ստորագրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության մարմնի ղեկավարի կողմից հաստատված և այդ մարմնի կնիքով վավերացված զենքի համարային հաշվառման ցուցակը:

18. Զենքի ու փամփուշտների հավաքածուներ կազմելով զբաղվող իրավաբանական անձանց ղեկավարները զենք ու փամփուշտներ ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար պարտավոր են ներկայացնել դիմում:

19. Պետական և համայնքային թանգարանները ներքին գործերի նախարարության թանգարանային հավաքածուի պետական մասի մեջ ընդգրկելու համար զենք և փամփուշտներ ձեռք են բերում թույլտվությամբ, իսկ զենքի առանձին տեսակների նվիրատվության կամ փոխանցման դեպքում թանգարանի ղեկավարը դիմումի հետ մեկտեղ ներքին գործերի նախարարության ոստիկանություն պարտավոր է ներկայացնել փոխանցվող ցուցանմուշ-զենքի նկատմամբ նվիրատուի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ:

20. Իրավաբանական անձանց կողմից փամփուշտներ ձեռք բերելու թույլտվության ձևակերպումն իրականացվում է զենք ձեռք բերելու թույլտվությունների համար սահմանված կարգով: Օգտագործված, կորած կամ ոչնչացման հանձնված փամփուշտների փոխարեն նորերը ձեռք բերելու համար դիմումատուն լրացուցիչ ներկայացնում է՝

1) իրավաբանական անձի ղեկավարի կողմից հաստատված փամփուշտների դուրսգրման ակտը.

2) ուսումնական և այլ նպատակներով իրականացված հրաձգությունների ժամանակ օգտագործված փամփուշտների բաշխման-հանձնման ամփոփագրերը կամ փամփուշտների դուրսգրման օրինականությունը հաստատող այլ փաստաթղթեր.

3) ոչնչացման նպատակով՝ ՆԳՆ ոստիկանության մարմիններին փոխանցված փամփուշտների ընդունման- հանձնման ակտերը:

21. Իրավաբանական անձանց հավաքածուներ կազմելու թույլտվություններ տալու կամ դրանց գործողության ժամկետները երկարաձգելու ժամանակ ուսումնասիրվում են զենք պահելու պայմանները, օբյեկտների տեխնիկական հագեցվածությունը և հաշվառման փաստաթղթերը: Կազմվում է ակտ՝ նշելով զենք ու փամփուշտներ պահելու թույլատրելի քանակությունը, դրանք պահելու պայմաններն ապահովող չհրկիզվող կամ մետաղյա պահարանների, դարակաշարերի և հրշեջ-պահպանական ահազանգման միջոցների առկայությունը:

22. Զենք ցուցադրելու թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձինք պարտավոր են ներկայացնել՝

1) դիմում (Ձև N 16).

2) իրավաբանական անձի կանոնադրության և պետական գրանցման փաստաթղթերի պատճենները կամ զենքի ու փամփուշտների հավաքածուներ կազմելու թույլտվությունը.

3) ցուցադրելու և զենքի ու փամփուշտների պահպանության պատասխանատու անձ նշանակելու մասին իրավաբանական անձի ղեկավարի հրամանի պատճենը.

4) զենք և փամփուշտներ ցուցադրելու, պահելու, հանձնելու և դրանց հետ կապված աշխատանքներին թույլատրված աշխատողների ցուցակը:

23. Պետական ու համայնքային թանգարանները նշված փաստաթղթերի հետ մեկտեղ ներկայացնում են նաև թանգարանային գործունեություն իրականացնելու իրավունք վերապահող փաստաթղթի պատճենը:

24. Թվարկված փաստաթղթերը ներկայացվում են նաև տրված թույլտվությունների գործողության ժամկետները երկարաձգելու համար: Թույլտվություններում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում դիմումին կցվում են այդ փոփոխություններն առաջացրած իրավաբանական փաստերի մասին տեղեկություններ, ինչպես նաև դրանց հետ կապված լրացուցիչ փաստաթղթեր:

25. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից իրենց պատկանող հավաքածուների, ինչպես նաև այլ սեփականատերերին պատկանող զենքի և դրա փամփուշտների հատուցվող ցուցադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրված ցուցադրելու թույլտվության հիման վրա:

26. Իրավաբանական և ֆիզիկական անձինք իրենց և այլ սեփականատերերի պատկանող զենքի հավաքածուի ցուցահանդեսները, ցուցահանդես-վաճառքները (այսուհետ՝ ցուցահանդես) կատարում են զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվության հիման վրա:

27. Զենք և փամփուշտներ ցուցադրելու թույլտվություն ստանալու համար ՀՀ քաղաքացիները ոստիկանություն ներկայացնում են դիմում:

28. Պետական ռազմականացված կազմակերպությունները զենքի գիտական, տեղեկատվական, ճանաչողական և քրեագիտական նշանակության հատուկ հավաքածուների ցուցահանդեսներ կազմակերպում են առանց թույլտվության:

29. Զենքի հավաքածու կազմելու թույլտվություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձինք իրենց պատկանող զենքը կարող են ցուցադրել զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվություն ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջոցով՝ նրանց հետ կնքած համապատասխան պայմանագրի հիման վրա: Ցուցահանդեսի անցկացման պատասխանատվությունը կրում է զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվություն ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձը:

30. Զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձինք պարտավոր են՝

1) ապահովել ցուցասրահների, զետեղարանների անվտանգությունը, ցուցանմուշների պահպանությունը.

2) ապահովել ցուցանմուշների հաշվառումը.

3) Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ներկայացնել ցուցադրման ենթակա զենքի համարային հաշվառման ցուցակները:

31. Զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց արգելվում է՝

1) ցուցադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության չհաշվառած զենքը.

2) ցուցահանդեսում զենք ցուցադրել այլ առարկաների հետ համատեղ, բացառությամբ զենքի պահեստամասերի, արտադրության սարքերի և գործիքների, սպորտային, որսորդական ու ձկնորսական հարմարանքների, զենքի տեխնիկական սպասարկման և նորոգման առարկաների.

3) զենքը պահել ցուցահանդեսի ընթացքում զենք պահելու պայմաններին չհամապատասխանող զետեղարանում:

32. Ցուցադրման թույլտվություն ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք առևտրային կամ ոչ առևտրային ցուցահանդեսի, ցուցահանդես-վաճառքի կամ աճուրդի կազմակերպման դեպքում պարտավոր են՝

1) տարածքի սեփականատիրոջ հետ կնքել վարձակալության պայմանագիր՝ զենքի և դրա փամփուշտների ցուցադրման, դրանց պահպանման վերաբերյալ.

2) օտարերկրյա մասնակիցների դեպքում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստանալ Հայաստանի Հանրապետություն զենք ներկրելու թույլտվություն կամ Հայաստանի Հանրապետությունից այն արտահանելու համար.

3) թույլ չտալ կողմնակի անձանց մուտքը զենքի և դրա փամփուշտների տեղաբաշխման ու պահման զետեղարաններ.

4) բաց ցուցափեղկում կամ ստենդում տեղադրված զենքը և փամփուշտները օրվա վերջում ցուցահանդեսի կամ աճուրդի ավարտից հետո հանձնել դրանց պահպանումը և անձեռնմխելիությունն ապահովող զետեղարաններ:

33. Մի քանի իրավաբանական կան ֆիզիկական անձանց կողմից զենքի և դրա փամփուշտների ցուցահանդեսի կամ աճուրդի կազմակերպման դեպքում միջոցառման անցկացման պարտականությունը կատարում է մասնակիցներից մեկը:

34. Զենքի և փամփուշտների ցուցահանդես անցկացնելու համար պատասխանատու անձը պարտավոր է ցուցադրումից առնվազն երեք օր առաջ ոստիկանությանը տեղյակ պահել տվյալ միջոցառման անցկացման ժամկետները, ինչպես նաև՝

1) ապահովել ցուցասրահների, զենքի զետեղարանների սարքավորումը, ցուցանմուշների ցուցադրումն ու ժամանակավոր պահպանումը.

2) կազմակերպել անհրաժեշտ անցագրային և ներօբյեկտային ռեժիմ, ապահովել զենքի անվտանգության և ցուցանմուշների հաշվառման սահմանված պայմանները.

3) ցուցադրվող զենքն ու փամփուշտները պահելու թույլտվություն ստանալու համար դիմումի հետ մեկտեղ ոստիկանություն ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա. ցուցահանդեսի մասնակիցների միջև կնքված պայմանագիրը՝ զենք և փամփուշտներ ցուցադրելու կարգի ու պայմանների, ցուցահանդես անցկացնելու և ցուցադրվող զենքի անվտանգությունն ապահովող պատասխանատուի նշանակելու (որոշման) մասին,

բ. ցուցահանդեսի մասնակիցների կողմից ցուցադրման համար ներկայացված զենքի և փամփուշտների ցուցադրման թույլտվությունների պատճենները,

գ. զենք ցուցադրելու և պահելու համար նախատեսված տարածքների օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերը, այդ տարածքների ուսումնասիրման ակտերը՝ կազմված ոստիկանության թույլտվության համակարգի, հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ու պահպանության ներկայացուցիչների կողմից,

դ. ցուցահանդեսի անցկացման ծրագիրը, ինչպես նաև էքսպոզիցիայի նախագիծը,

ե. պահպանություն իրականացնող ծառայության հետ կնքված պայմանագրի պատճենը՝ շինությունների պահպանության և պահնորդա-ազդանշանային կենտրոնացված պահպանության դիտակետին դրանց միացման մասին,

զ. մասնակից իրավաբանական և ֆիզիկական անձանց ցուցակները, ցուցահանդեսի կազմակերպման պատասխանատու իրավաբանական անձի կողմից պահպանության և ցուցադրվող զենքերի համար պատասխանատուների ցուցակը, նրանց անձնագրային տվյալները, արտակարգ կապի հեռախոսների տեղակայման վայրերը, պահպանության պատասխանատու անձանց նշանակելու հրամանների պատճենները,

է. ցուցադրման ներկայացված զենքերի համարային հաշվառման ցուցակները, որտեղ նշվում են զենքերի տեսակները, մոդելները, տրամաչափերը և համարները, ինչպես նաև՝ ցուցադրման ենթակա փամփուշտների քանակը, տեսակը և տրամաչափեր:

35. Ցուցահանդես կազմակերպելու դեպքում ցուցահանդես անցկացնելու պատասխանատու անձը ոստիկանություն պարտավոր է ներկայացնել՝

1) ցուցահանդես անցկացնելու և ցուցադրվող զենքի ու փամփուշտների պահպանության պատասխանատու անձ նշանակելու մասին որոշման պատճենը.

2) ոստիկանության թույլտվության համակարգի, հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ու պահպանության ներկայացուցիչների կողմից ցուցասրահների և զենք պահելու վայրերի ուսումնասիրության ակտ.

3) զենքի ցուցադրման ծրագիրը և էքսպոզիցիայի տեղադրման նախագիծը, ցուցահանդեսը պահնորդա-ազդանշանային կենտրոնացված պահպանության դիտակետին միացնելու պայմանագիրը, միջոցառման մասնակից իրավաբանական և ֆիզիկական անձանց ու մասնակից կազմակերպությունների պատասխանատու անձանց ցուցակները, ինչպես նաև ցուցադրման ներկայացված զենքի համարային հաշվառման ցուցակը, ինչպես նաև փամփուշտների քանակը, տեսակը և տրամաչափը:

36. Ցուցադրումը կազմակերպող պատասխանատու անձը ցուցադրումը սկսելուց առաջ ոստիկանության իրավասու աշխատակցին ներկայացնում է ցուցադրվող զենքերն ու փամփուշտները՝ զննելու, հաշվառելու և ուղեկցող փաստաթղթերի համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ցուցահանդեսի ավարտից հետո զենքն ու փամփուշտները ենթակա են կրկնակի զննության ու ստուգման:

37. Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով քաղաքացիական և ծառայողական զենք ու փամփուշտներ տեղափոխելու համար զենքի ու փամփուշտների հավաքածուներ կազմելու կամ ցուցադրելու թույլտվություն ունեցող կազմակերպությունները, զենք և փամփուշտներ ներկրելու կամ արտահանելու թույլտվություն ստանալու համար ոստիկանություն պարտավոր են ներկայացնել դիմում՝ նշելով տեղեկություններ՝

1) զենքի տեսակների, մոդելների, տրամաչափերի, սերիաների, համարների, ինչպես նաև փամփուշտների տեսակների, տրամաչափերի, պատրաստման խմբաքանակի և քանակության մասին.

2) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության թույլտվությունը ոստիկանությունում գրանցված մշակութային արժեք հանդիսացող զենքը ՀՀ-ից արտահանելու համար.

3) զենք ու փամփուշտներ ներկրելու (արտահանելու) ընթացքում տեղափոխման անվտանգության պատասխանատու անձ նշանակելու հրամանի պատճենը և նրա անձնագրային տվյալների մասին.

4) զենքի և փամփուշտների համապատասխանության գնահատման փաստաթղթի պատճենը բացառությամբ՝

ա. պետական կադաստրում ընդգրկված քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների,

բ. հավաքածուների համար նախատեսված զենքերի և փամփուշտների,

գ. ցուցահանդեսի օտարերկրյա մասնակցի կողմից ցուցադրման նպատակով ներկրվողների, եթե առկա են ցուցահանդեսի անցկացման և զենքի ցուցահանդեսի անցկացման պատասխանատու իրավաբանական անձի հրավերը կամ նրա հետ կնքված պայմանագիրը,

դ. օտարերկրյա ցուցահանդեսների մասնակցելու նպատակով արտահանվողների՝ համապատասխան հրավերների և կնքված պայմանագրերի առկայության դեպքում,

ե. լիազորված հանրապետական գործադիր իշխանության մարմնի որոշմամբ ցուցադրելու միջոցառումներին մասնակցելու նպատակով զենք և փամփուշտներ արտահանելու դեպքում պայմանագրի փոխարեն ներկայացվում է համապատասխան գործադիր իշխանության մարմնի ղեկավարի որոշման պատճենը.

զ. զենք ու փամփուշտներ արտադրող իրավաբանական անձանց արտադրական (տեխնոլոգիական) նպատակներով եզակի նմուշ ներկրելու դեպքում:

38. Զենքի հավաքածու կազմելով կամ դրանց ցուցադրմամբ զբաղվող քաղաքացիների և իրավաբանական անձանց գործունեության ստուգումներն իրականացվում են ոստիկանության կողմից՝ անհրաժեշտության դեպքում ընդգրկելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության

մշակութային արժեքների պահպանության հատուկ հավատարմագրված ներկայացուցիչների՝ ապահովելով զենքերի և դրանց սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը:

39. Հավաքածու ունեցող իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց ստուգումներն իրականացվում են եռամսյակը մեկ անգամ:

40. Զենքի հավաքածու ունեցող կամ դրանց ցուցադրմամբ զբաղվող իրավաբանական անձանց ստուգումների ընթացքում պարզվում են՝

1) նրանց գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին, ինչպես նաև կանոնադրական և գրանցման փաստաթղթերին.

2) զենքի ընդունման-հանձնման ակտերի առկայությունը և զենքի ու փամփուշտների սեփականատերերի հետ կնքված ցուցադրմանը մասնակցելու պայմանագրերը կամ իրավասու մարմինների կողմից վերցված զենքն ու փամփուշտները թանգարաններին պատասխանատու պահպանության փոխանցելու վերաբերյալ ընդունման-հանձնման ակտերը, ինչպես նաև հավաքածու կազմելու ենթակա զենքի և փամփուշտների պատմամշակութային ու արվեստաբանական փորձաքննության ակտերը.

3) զենք ցուցադրելու, պահելու տեղերի համապատասխանությունը զենքի պահման պայմաններին.

4) զենքի հավաքածու կազմելու, ցուցադրելու, պահելու սահմանված կարգի և ցուցափեղկերում ու այլ տեղերում նրանց պահպանության ապահովումը.

5) զենքի հաշվառման փաստաթղթերի, գործավարության համապատասխանությունը սույն կարգի պահանջներին.

6) ցուցադրման համար նախատեսված զենքի ընդունման-հանձնման, մշակութային արժեք ունեցող զենքի պատմամշակութային և արվեստաբանական փորձաքննության ակտերի առկայությունը, ինչպես նաև իրավասու մարմինների կողմից վերցված զենքի և փամփուշտների վերաբերյալ նյութերը ոստիկանություն ժամանակին հանձնելու փաստերը.

7) զենքի և փամփուշտների հետ վարվելու, դրանց պահպանության պատասխանատու անձանց, փորձաքննություն, հետազոտություն իրականացնող մասնագետներին հանձնելու և զենքի ու փամփուշտների հետ կապված այլ թույլատրելի աշխատանքների փաստաթղթավորումը.

8) իրավաբանական անձի աշխատողներին զենքի և փամփուշտների հետ առնչվող աշխատանքներին թույլատրելու հիմքերը, անվտանգության միջոցառումների ապահովումը տեղափոխման, ուղեկցման և գնորդներին ու այցելուներին ցուցասրահներ, իսկ այլ կազմակերպությունների մասնագետներին՝ հավաքածուների պահոցներ և զետեղարաններ մուտքը թույլատրելիս.

9) ոստիկանության կողմից նախորդ ստուգումների ժամանակ հայտնաբերված խախտումների ժամանակին և լիարժեք վերացումը:

41. Կազմակերպվող զենքի ցուցահանդեսի ստուգումներն իրականացվում են ոստիկանության կողմից:

42. Իրավաբանական անձանց պատկանող հավաքածուների կամ ցուցադրման ենթակա զենքի պահոցներում և զենքի զետեղարաններում պետք է վարվեն զենքի հանձնման-ընդունման, իսկ ցուցահանդեսների փակ պահոցների համար՝ պատասխանատու անձի հաշվառման մատյաններ:

43. Զենքի և փամփուշտների հավաքածու կազմող կազմակերպությունները վարում են հավաքածուների մեջ ընդգրկված զենքի և փամփուշտների համարային հաշվառման մատյան:

44. Իրավաբանական անձանց կողմից հավաքածու զենքի և փամփուշտների պահելն իրականացվում է զենքի և փամփուշտների զետեղարանների համար սահմանված պահանջներին համապատասխան սարքավորված զինասենյակներում:

45. Ցուցահանդեսներում և գործադիր իշխանության մարմինների կողմից կազմակերպված միջոցառումների ժամանակ ցուցադրվող զենքերը և փամփուշտները տեղադրվում են ահազանգման համակարգով սարքավորված և պատասխանատու անձի կողմից կնքված փակ ցուցափեղկերում:

46. Այն դեպքերում, երբ զենք և փամփուշտներ ցուցադրելու շինությունն ունի զենք և փամփուշտներ պահելու համար սահմանված տեխնիկական ամրացվածություն, թույլատրվում է դրանք պահելը փակ ցուցափեղկերում:

47. Ցուցահանդեսը փակվելուց կամ զենքի ցուցադրելն ավարտելուց հետո, բաց ցուցափեղկերում տեղադրված զենքն ամեն օր հանձնվում է զետեղարաններ՝ պահպանության համար: Յուրաքանչյուր ցուցափեղկի և ցուցավահանակի վրա, համաձայն տարածքի նկարագրի, դրվում է հերթական համար և գույքահամար:

48. Թանգարաններում և զենքի ու փամփուշտների հավաքածու կազմելով զբաղվող կազմակերպություններում ոստիկանության աշխատակիցները պարզում են՝

1) շինությունների (պահոցների) տեխնիկական ամրացվածության համապատասխանությունը զենքի պահման պայմաններին.

2) զենքի և փամփուշտների անվտանգ պահպանության և ցուցադրման համար սարքավորված վահանակների և ցուցափեղկերի առկայությունը.

3) հրշեջ-պահպանական ահազանգման միջոցների սարքինությունը, դրանց հուսալի սնուցումը էլեկտրացանցից և էլեկտրասնուցման պահեստային աղբյուրից, ինչպես նաև պահպանության աշխատողներին շտապ ցուցասրահ կամ ցուցահանդեսային դահլիճ կանչի ահազանգման համակարգի անխափան աշխատանքը.

4) պահպանության համապատասխանությունը զենքի և փամփուշտների պահպանության ու ցուցադրման կազմակերպման համար սույն հրահանգով սահմանված պահանջներին:

49. Զետեղարանների, կառույցների և շենքերի զննությունն իրականացվում է իրավաբանական անձի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ զենքերի և փամփուշտների պահպանության համար պատասխանատու անձանց ներկայությամբ:

50. Զենքի և փամփուշտների հավաքածու կազմելու կամ ցուցադրության համար նախատեսված իրավաբանական անձանց օբյեկտները և թանգարանները հետազոտվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարության մասնագետների մասնակցությամբ:

51. Զենքի և փամփուշտների շրջանառության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս ոստիկանությունն իրավունք ունի կատարելու զենքի զննում, դրա ցուցադրելու ժամանակ անհատույց վերցնելու և ոչնչացնելու Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված զենքն ու փամփուշտները, ինչպես նաև՝ վերցնելու զենքն այն դեպքում, եթե բացակայում է զենք և փամփուշտներ ցուցադրելու թույլտվությունը, ինչպես նաև խախտվել են զենքը ցուցադրելու կանոնները՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերջնական որոշում կայացնելը:

52. Զենքի կորստի, հափշտակման կամ ապօրինի օգտագործման հանգեցնող կոպիտ խախտումներ հայտնաբերելու դեպքում կնքել զենքի և փամփուշտների ցուցադրման (ցուցահանդես-վաճառքների կամ աճուրդների) վայրերը, ժամանակավորապես սահմանափակելով աշխատակիցների մուտքը՝ մինչև հայտնաբերված թերությունները վերացնելը:

53. Զենքի և փամփուշտների տեղափոխման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս ոստիկանությունը պարզում է՝

1) զենքեր տեղափոխող կազմակերպության գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) զենքի և փամփուշտների ընդունման, հանձնման և փոխանցման (վերադարձման) օրինականությունը.

3) զենք և փամփուշտներ պահելու, բարձելու և բեռնաթափելու վայրի շինությունների, կառույցների տեխնիկական ամրացվածությունը, զենքի և փամփուշտների պահպանության հուսալիությունը, ինչպես նաև դրանց հետ առնչվելիս՝ անվտանգության կանոնների ապահովումը.

4) զենքի հաշվառման համակարգի և գործավարության համապատասխանությունը սույն հրահանգի պահանջներին, հաշվառման փաստաթղթերի առկայությունը, գրանցումների ճշգրտությունը.

5) մաքսային հսկողության տակ գտնվող զենքի և փամփուշտների մաքսային փաստաթղթերը.

6) Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված զենքի, փամփուշտների և կառուցվածքով զենքի նմանվող արտադրանքի բացակայությունը.

7) զենքի և փամփուշտների հաշվառման ու պահպանության պատասխանատու անձանց կողմից դրանց հետ վարվելու ներքին հսկողության կարգը.

8) իրավաբանական անձի աշխատողների զենքի և փամփուշտների հետ կապված աշխատանքներին առնչվելու թույլտվության առկայությունը.

9) ոստիկանության կողմից վերջին ստուգման ժամանակ հայտնաբերված խախտումները ժամանակին և լիարժեք վերացնելը, գործադիր իշխանությունների իրավասու մարմինների կողմից հրահանգների (նախազգուշացումների) կատարելը:

54. Զենք և փամփուշտներ փոխադրելու ճանապարհին ստուգվում են՝

1) ապրանքատրանսպորտային, ուղեկցող և այլ փաստաթղթերի առկայությունը, որոնց հիման վրա իրականացվում են զենքի և փամփուշտների տեղափոխումը և փոխադրումը, ինչպես նաև՝ բեռն ուղեկցողների՝ անձը հաստատող փաստաթղթերը, զինված պահպանություն իրականացնող աշխատակիցների զենք պահելու և կրելու իրավունքը.

2) տրանսպորտային միջոցների սարքավորվածությունը՝ սահմանված պահանջներին համապատասխան.

3) անհրաժեշտ քանակությամբ զինված պահակախմբի առկայությունը.

4) տրանսպորտային միջոցներում զենքի և փամփուշտների տեղադրման կարգը, օգտագործվող տարաների (արկղեր, փաթեթներ) ամբողջականությունը մատակարար իրավաբանական անձանց, փոխադրողների կամ մաքսային մարմինների կնիքների (կապարակնիքների) առկայությունը:

Ձև N 1

Ա Կ Տ

զենքը և փամփուշտները օգտագործելու, պահելու և զետեղարանները ստուգելու

___ _____ _____ թ.

Իմ (մեր) կողմից _____
(ստուգողի պաշտոնը, Ա.Ա.Հ.)
_____
_____
ներկայությամբ _____
(պաշտոնը, Ա.Ա.Հ.)
_____
ստուգվել է _____
(օբյեկտի անվանումը, հասցեն)
_____
Ստուգման արդյունքում պարզվել է.
1. Պահվում է (օգտագործվում է) _____
_____
(զենքի տեսակը, մոդելը, քանակը, համարը,
_____
փամփուշտների քանակն ըստ տեսակների)
_____
_____
2. Թույլտվության N _____ տրված _____
_____
(ՆԳՆ ոստիկանության մարմնի անվանումը, տրման ամսաթիվը)

մինչև ___ _____ _____ թ. գործողության ժամկետը
Պատասխանատու անձ _____
_____
(պաշտոնը, Ա.Ա.Հ.)

3. Ստուգման արդյունքները.
Պահելը, զետեղելը, տեղաբաշխելը կամ օգտագործելը (ավելորդի վրա գիծ քաշել) իրականացվում է
_____
(առանձնացված ընդհանուր սենյակում, զետեղարանում նշելով նրա տեղաբաշխման վայրը)
_____

պատուհանախոշերը սարքավորված են երկաթյա վանդակաշարով _____
(այո, ոչ)
դռները հուսալի են _____ պատերը, հատակը, առաստաղը ամուր են _____
(այո, ոչ) (այո, ոչ)
կառույցն ապահովված է ահազանգման համակարգով _____
(նշվում է ահազանգման տեսակը)

_____
ահազանգման համակարգի էլեկտրասնուցման լրացուցիչ աղբյուրի առկայությունը
_____
(այո, ոչ)
Զենքը և փամփուշտները պահվում են չհրկիզվող կամ մետաղյա պահարանում, հուսալի փականներ ունեցող արկղում, բուրգում, ցուցափեղկում (ընդգծել)
Զենքերի (փամփուշտների) հաշվառման և օգտագործման փաստաթղթերի առկայությունը
_____
(նշվում են փաստաթղթերը)
_____
_____
4. Հայտնաբերված խախտումները և դրանք վերացնելու մասին պարտադիր կատարման հանձնարարականները

| N | Հայտնաբերված խախտումները | Հանձնարարականներ դրանք վերացնելու մասին | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| | | | |

5. Նախորդ ստուգման արդյունքներում տրված հանձնարարականի կատարումը
_____
(ով է անցկացրել վերջին ստուգումը.
_____
նշվում են հանձնարարականների կատարված և չկատարված կետերը)
_____
_____
6. Օբյեկտի ստուգման վերաբերյալ որոշումը
_____
(թույլատրել հետագա պահելը, օգտագործելը, արգելել կամ կնքել օբյեկտը
_____
բացասական որոշման դեպքում նշել հիմքերը)

Ստուգողների ստորագրությունը.
_____ _____
_____ _____
_____ _____
ստորագրություն պաշտոնը, կոչումը, Ա.Ա.Հ.
___ _____ _____ թ.

Ստուգման ակտի պատճենն ստացա
_____ _____
ստորագրություն պաշտոնը, Ա.Ա.Հ.
___ _____ _____ թ.

Ձև N 2

«Հաստատում եմ»

_____

(ՆԳՆ ոստիկանության մարմնի ավանումը)

_____

(պաշտոնը

_____

Ա.Ա.Հ.)

_____

(ստորագրություն)

___ _____ _____ թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու

_____

(նշվում է գործողության կամ գործունեության տեսակը)

___ _____ _____ թ. _____

(բնակավայրը)

Ես _____

(պաշտոնը, կոչումը, Ա.Ա.Հ.)

ուսումնասիրելով _____

(իրավաբանական անձի անվանումը, հասցեն,

_____

քաղաքացու Ա.Ա.Հ., բնակության վայրի հասցեն)

պարզեցի, որ _____

նշվում է խախտումը, որի դեպքում բացառվում է գործողությունը կամ գործունեությունը

_____

Ելնելով վերոգրյալից՝ Գտնում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել _____ կողմից տրված

(նշվում է ՆԳՆ ոստիկանության մարմնի անվանումը)

սերիան _____ N _____ մինչև ___ _____ _____ թ. գործողության ժամկետով

_____

(նշվում է գործողության կամ գործունեության տեսակը)

որի մասին հայտնել _____

(նշվում է թույլտվության տիրոջ Ա.Ա.Հ.

_____

կամ իրավաբանական անձի ղեկավարի Ա.Ա.Հ.)

2. _____

նշվում է գործողության ժամկետը (վերցնել, վաճառել, փոխանցել) ժամկետը

_____

_____ _____

(ստորագրություն) (Ա.Ա.Հ)

____ _____ թ.

Ձև N 3

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## զենքը և փամփուշտները վերցնելու

___ _____ ____ թ. _____
(բնակավայրը)

Ես _____
(արձանագրություն կազմող անձի պաշտոնը, կոչումը, Ա.Ա.Հ.)

կազմեցի սույն արձանագրությունը և վերցրեցի
քաղ. _____
(Ա.Ա.Հ.)

բնակվող _____
կազմակերպության (համար)

_____
(կազմակերպության անվանումը

_____
ղեկավարի պաշտոնը, Ա.Ա.Հ.)

հասցեն _____
զենքը _____
(տեսակը, մոդելը, տրամաչափը, սերիան, համարը, արտադրման տարեթիվը)

փամփուշտները և ռազմամթերքը _____
(քանակը, տեսակը, տրամաչափը)

Ջնությամբ պարզեցի _____
(նկարագրել զենքի ընդհանուր տեխնիկական վիճակը,

_____
թերություններն ու անսարքությունները,

_____
փողերի ներսի փոսիկները, դետալների կոռոզիան և այլն)

_____
_____
_____
_____

Զենքը հաշվառված է (հաշվառված չէ) _____
(նշվում է թույլտվության սերիան, համարը,

_____
գործողության ժամկետը, այն տված ՆԳՆ ոստիկանության մարմնի անվանումը)

Վերցնելու հիմքը _____
(նշվում են խախտումները)

_____
_____
_____

Զենքը, փամփուշտները և ռազմամթերքը վերցվել է ընթերակաների ներկայությամբ.

1. _____ բնակվող _____
(Ա.Ա.Հ., անձնագրային տվյալներ) (հասցեն)

_____
(ստորագրություն)

2. _____ բնակվող _____
(Ա.Ա.Հ., անձնագրային տվյալներ) (հասցեն)

_____
(ստորագրություն)

_____ _____
(արձանագրություն կազմողի ստորագրությունը) (Ա. Ա. Հ.)

Արձանագրության պատճենն ստացա _____
(ստորագրություն)

____ _____ _____ թ.

Ձև N 4

# Մ Ա Տ Ց Ա Ն

զենքի և փամփուշտների հանձնման-ընդունման

_____

(կազմակերպության, ստորաբաժանման անվանումը, հասցեն)

Սկսվել է
Ավարտվել է

| N | Կազմակերպության աշխատողի Ա.Ա.Հ. | Զենքն ու փամփուշտներն ինչ նպատակով են հանձնվել | Զենքի տեսակը, մոդելը, տրամաչափը, սերիան, զենքի համարը, փամփուշտների քանակն ըստ տեսակների և տրամաչափի | Նշում զենքի և փամփուշտների հանձնման մասին | | Նշում զենքի և փամփուշտների ընդունման մասին | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հանձնելու ամսաթիվը և ժամը | զենք և փամփուշտներ ստացողի ստորագրությունը | ընդունման ամսաթիվը և ժամը | զենք և փամփուշտ ընդունողի ստորագրությունը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Ծանոթություն. Գիրքը կարվում, համարակալվում և կնքվում է զենք պահելու և օգտագործելու թույլտվություն տված ՆԳ մարմնի կողմից:

Ձև N 5

# Մ Ա Տ Յ Ա Ն

զենքի և փամփուշտների առկայության և տեխնիկական վիճակի ստուգման

_____

(կազմակերպության, ստորաբաժանման անվանումը, հասցեն)

Սկսել
Ավարտել

| N | Զենքի ստուգման ամսաթիվը | Զենքը ստուգողի պաշտոնը, Ա.Ա.Հ. | Ստուգվել է | | Նշումներ, դիտողություններ զենքերի (փամփուշտների) առկայության մասին, խնամքի և պահպանության վերաբերյալ | Տեխնիկական անսարքություններ ունեցող զենքերի քանակը | Զենքերի համարները և անսարքության բնութագիրը | Վերանորոգման հանձնելու ամսաթիվը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | զենքի մոդելը (փամփուշտների տեսակը) | քանակը | | | | | |
| | | | | | | | | | |

Ծանոթություն. Գիրքը կարվում, համարակալվում և կնքվում է հաշվառման վայրի ՆԳ մարմնի կողմից:

Ձև N 6

# Մ Ա Տ Ց Ա Ն

հերթապահության հանձնման-ընդունման

_____

(կազմակերպության, ստորաբաժանման անվանումը, հասցեն)

Սկսվել է
Ավարտվել է

| N | Ամսաթիվը | Զենքի և դրանց փամփուշտների հանձնման-ընդունման մասին գրառումներ | Հանձնեց | Ընդունեց | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |

Ծանոթություն. Գիրքը կարվում, համարակալվում և կնքվում է զենքի և փամփուշտների հաշվառման վայրի ՆԳ մարմնի կողմից:

Ձև N 7

Փաթեթավորման թերթիկ N _____
կարգագրին (ապրանքագրին) կից N _____
_____
(կազմակերպության, ստորաբաժանման անվանումը, հասցեն)

| N | Ձենքի և փամփուշտների անվանումը | Տեսակը և տեսակը | Գործարանային համարը | Փամփուշտների արտադրության խմբաքանակի համարը | Արտադրման տարեթիվը | Քանակը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

Փաթեթավորումը կատարեց. _____ (ստորագրություն) _____ (Ա.Ա.Հ.)

Ստուգեց. _____ (ստորագրություն) _____ (առաքման և փոխադրման համար պատասխանատու անձի Ա.Ա.Հ.)

Կ.Տ. ___ _____ ____ թ.

Ձև N 8

Ց ՈՒ Ց Ա Կ

զենքի և փամփուշտների ամրացվածության

_____

(կազմակերպության, ստորաբաժանման անվանումը)

որը գտնվում է _____ ___ N___

(նշել զենքի և փամփուշտների պահման տեղը անկիզելի կամ մետաղյա պահարան, բուրգ, արկղ)

___ _____ _____ թ. դրությամբ

| N | Ա.Ա.Հ. | Սերիան, համարը և արտադրման տարեթիվը | Փամփուշտների քանակը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 9 մմ ատրճանակ ԻԺ-71 | | | |
| 1 | | | |
| 2 | | | |
| 3 | | | |
| Ընդամենը | | | |
| Ողորկափող հրացան ԻԺ-81 | | | |
| 26 | | | |
| 27 | | | |
| Ընդամենը | | | |
| Ողորկափող հրացան Սայգա-410 Կ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 48 | | | |
| 49 | | | |
| | Ընդամենը | | |
| Ողորկափող հրացան Սայգա-20 | | | |
| 65 | | | |
| 66 | | | |
| | Ընդամենը | | |
| Գազային ատրճանակ | | | |
| 75 | | | |
| 76 | | | |
| | Ընդամենը | | |
| Գազային ռևոլվեր | | | |
| 85 | | | |
| 86 | | | |
| | Ընդամենը | | |

Պահպանության ապահովման և հաշվառման պատասխանատու անձ.

_____ (ստորագրություն) _____ (Ա.Ա.Հ.)

___ _____ _____ թ.

Ձև N 9

# Մ Ա Տ Յ Ա Ն

ստացվող, պահվող և փոխանցվող (վաճառվող) զենքի ու փամփուշտների առկայության և շարժի հաշվառման

_____

(կազմակերպության, ստորաբաժանման անվանումը)

_____

(զենքի և փամփուշտների տեսակը)

Սկսվել է
Ավարտվել է

| N | Մուտք | | | | | | Ելք | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Որտեղից և ումից է ստացվել զենքն և փամփուշտ-ները (կազմակեր-պության անվանումը և հասցեն) | Մուտքի փաստաթղթի համարը, անվանումը և ամսաթիվը | ՆԳ մարմնի թույլ-տվության սերիան, համարը և ամսաթիվը | Զենքի և փամփուշտ-ների տեսակը, մոդելը և տրամաչափը | Զենքի համարը, փամփուշտների չափաբաժնի արտադրման խմբաքանակի համարը | Զենքն ու փամփուշտ-ները ընդունող անձի ստորագրու-թյունը | Փոխանցման, առաքման ամսաթիվը | ՈՒՄ է փոխանցված կազմակերպության անվանումը, հասցեն, պատասխանատու անձի Ա.Ա.Հ.) | Փաստաթղթի անվանումը համարը և ամսաթիվը | Հիմքը և ում կողմից է տրված | Զենքն ու փամփուշտները ստացող անձի ստորա-գրությունը |
| | | | | | | | | | | | |

Ծանոթություն. Գիրքը կարվում, համարակալվում և կնքվում է զենքի և փամփուշտների հաշվառման վայրի ՆԳ մարմնի կողմից:

Ձև N 10

ԴԱՐԱԿԱՇԱՐԻ ՊԻՏԱԿ

դարակաշար N _____

_____
(զենքի և փամփուշտների անվանումը)

Արտադրող գործարան. _____
_____

Արտադրման տարեթիվը _____ N (արտադրման խմբաքանակի համարը) _____
Ստանալու ամսաթիվը _____ Փամփուշտների քանակը _____

Արտադրման տարեթիվը _____ N (արտադրման խմբաքանակի համարը) _____
Ստանալու ամսաթիվը _____ Փամփուշտների քանակը _____

Արտադրման տարեթիվը _____ N (արտադրման խմբաքանակի համարը) _____
Ստանալու ամսաթիվը _____ Փամփուշտների քանակը _____

Արտադրման տարեթիվը _____ N (արտադրման խմբաքանակի համարը) _____
Ստանալու ամսաթիվը _____ Փամփուշտների քանակը _____

Արտադրման տարեթիվը _____ N (արտադրման խմբաքանակի համարը) _____
Ստանալու ամսաթիվը _____ Փամփուշտների քանակը _____

Արտադրման տարեթիվը _____ N (արտադրման խմբաքանակի համարը) _____
Ստանալու ամսաթիվը _____ Փամփուշտների քանակը _____

Արտադրման տարեթիվը _____ N (արտադրման խմբաքանակի համարը) _____
Ստանալու ամսաթիվը _____ Փամփուշտների քանակը _____

Արտադրման տարեթիվը _____ N (արտադրման խմբաքանակի համարը) _____
Ստանալու ամսաթիվը _____ Փամփուշտների քանակը _____

Զենքի (փամփուշտների) հաշվառման և պահպանության ապահովման պատասխանատու անձի

_____ _____
(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

___ _____ _____ թ.

Ձև N 11

# ՄԱՏՅԱՆ

անհատական ամրացված զենքի և փամփուշտների համարային հաշվառման

_____

(կազմակերպության, ստորաբաժանման անվանումը, հասցեն)

Սկսվել է
Ավարտվել է

## I Մաս. Զենքի և փամփուշտների հաշվառում

| N | | Զենքի (փամփուշտների) | 9 մմ փամփ. ԻԺ-71 | | | Ողոր-կափող ԻԺ-81 (12տր.) | | | Ողորկափող Սայգա-410Կ | | | Ողորկա-փող Սայգա-20 | | | Գազային ատրճանակ | | | Եվ այլն | | | 9 մմ փամփ. ԻԺ-71 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հետ կատարվող գործողու-թյունների անվանումը, մուտքի-ելքի փաստաթղթերի անվանումը, համարը, ամսաթիվը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

II Մաս. Զենքի և փամփուշտների ամրացում

| | | Ա.Ա.Հ. | Զբաղեցրած պաշտոնը | Ամրացված զենքի և փամփուշտների անվանումը | | | | | | | | | | | | | | | | | | | Նշում զենք և փամփ. հանձնելու մասին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Ծանոթություն. Գիրքը կարվում, համարակալվում և կնքվում է զենքի և փամփուշտների հաշվառման վայրի ՆԳ մարմնի կողմից:

Ձև N 12

# Մ Ա Տ Յ Ա Ն

վաճառված զենքի և փամփուշտների հաշվառման

_____

_____

(զենքի և փամփուշտների առևտրով զբաղվող կազմակերպության անվանումը, հասցեն)

| N | | Զենքն ու փամփուշտները ում է վաճառվել (կազմակեր-պության անվանումը, գնողի Ա.Ա.Հ.) | ՆԳՆ ոստիկանության մարմինների տված զենք և փամփուշտներ ձեռք բերելու թույլտվության սերիան, համարը, ում և երբ է տրվել | Վաճառված զենքը և փամփուշտները | | Ստորագրություն ստանալու մասին | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | զենքը, մոդելը | վաճառված զենքի սերիան և համարը (փամփուշտների քանակն ըստ արտադրման խմբաքանակի) | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

Ծանոթություն. 1. Մատյանը կարվում, համարակալվում և կնքվում է զենքի առևտրի լիցենզիա տված ՆԳՆ ոստիկանության մարմնի կողմից:

2. Զենքը (փամփուշտները) վերադարձնելու կամ փոխելու դեպքում «9-րդ» սյունակում նշվում են ընդունման ակտի համարը, ամսաթիվը և ում կողմից է վերադարձվել:

Ձև N 13

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

_____
(կազմակերպության ղեկավարի
_____
պաշտոնը Ա. Ա. Հ.)
_____
(ստորագրություն)
___ _____ _____ թ.

ԶԵՆՔԻ ԵՎ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ (ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ)
ԱԿՏ N _____

Հանձնաժողովը հետևյալ կազմով. նախագահ _____
(պաշտոնը, Ա.Ա.Հ.)
անդամներ_____
_____
_____
(պաշտոնը, Ա.Ա.Հ.)

անցկացրել է ___ _____ ___ թ. վերադարձված զենքի և փամփուշտների զննում, որն ընդունել է.
Ումից _____

_____

Ընդունման ժամանակ պարզվել է՝

| N | Անվանումը | Հաշվառված փաստաթղթերով | Փաստացի առկա է | Տարբերությունը | | Նշումներ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պակասորդ | ավելորդ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

Պակասորդի, ավելցուկի և որակի անհամապատասխանության պատճառները
_____
_____
_____
Հանձնաժողովի նախագահ.

անդամներ
_____ _____
_____ _____
_____ _____
(ստորագրություն) (Ա. Ա. Հ.)
___ _____ _____ թ.
Պատասխանատու պահպանության ընդունեց

_____ _____

(ստորագրություն) (Ա. Ա. Հ.)

Հանձնեց

_____ _____

(ստորագրություն) (Ա. Ա. Հ.)

Ձև N 14

# Մ Ա Տ Ց Ա Ն

զենքի և փամփուշտների փոխադրման հաշվառման

_____

(զենքը և փամփուշտները փոխադրող կազմակերպության անվանումը)

Սկսվել է
Ավարտվել է

ձախ կողմ

| N | Իրավաբանական անձի անվանումը | Փոխադրման հիմքը | | | Զենքի մոդելը, տրամաչափը (փամփուշտ-ների տեսակը) | Զենքի գործարանային համարը, փամփուշտների արտադրման խմբաքանակը | Արտադրման տարեթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Փաստաթղթի անվանումը | փաստաթղթի համարը և ամսաթիվը | գործողության ժամկետը | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

աջ կողմ

| փոխադրման երթուղին | | Տրանսպորտի տեսակը | Առևտրա-տրանսպորտային փաստաթղթի համարը | Փոխադրման պատասխանատու անձ | Պահնորդագրի սպառազինությունը և քանակը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| սկզբնական կետ | վերջնական կետ | | | | | |
| 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| | | | | | | |

Ձև N 15

_____
(նշվում է ՆԳՆ ոստիկանության մարմնի անվանումը

_____
ղեկավարի Ա.Ա.Հ.)

Ումից _____
(նշվում է քաղ. կամ իրավաբանական անձի ղեկավարի պաշտոնը

_____
Ա.Ա.Հ., գրանցման վայրի հասցեն)

_____

# Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ ինձ տալ զենքի հավաքածու կազմելու թույլտվություն

_____
(նշվում է զենքի տեսակը)

Զենքերը (փամփուշտները) պահելու վայրի հասցեն և պայմանները.

_____
_____
_____
_____
_____

Անձնագիր.

_____
_____
(նշվում են սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

Դիմումին կցվում են.

_____
_____
_____
_____
(նշվում է փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հրահանգի 17, 19 կետերի)

_____ _____
(ստորագրություն) (Ա. Ա. Հ.)

_____ _____ թ.

Կ. Տ.

Ձև N 16

_____
(ՆԳՆ ոստիկանության մարմնի անվանումը

_____
ղեկավարի Ա.Ա.Հ.)

Ումից _____
(կազմակերպության անվանումը

_____
դիմողի պաշտոնը Ա.Ա.Հ.)

_____

# Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ տալ զենքի հավաքածու ցուցադրելու թույլտվություն

_____
(կազմակերպության անվանումը ամբողջությամբ, իրավաբանական հասցեն)

_____

_____
(իրավաբանական անձի ղեկավարի Ա.Ա.Հ., պաշտոնը

_____
անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել, գրանցման վայրի հասցեն)

_____

Ցուցադրման ենթակա զենքի տեսակը, քանակը

_____

_____

_____

_____

Ցուցահանդեսը, ցուցահանդես-վաճառքը, աճուրդը (ավելորդի վրա գիծ քաշել) կազմակերպվելու է.

_____
(նշել հասցեն)

_____

Զենքի պահպանության ապահովման միջոցառումները՝

_____

_____

_____

Դիմումին կցվում են.

_____

_____

_____

_____

(նշվում է փաստաթղթերի ցանկը)

Ղեկավար _____

(կազմակերպության անվանումը)

_____ _____

(ստորագրություն) (Ա.Ա.Հ)

Կ.Տ. _____ _____ _____ թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ